ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/47058-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-279-12.09.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1453 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Սահակյան
Հեռ. 010515826

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վաղարշակ Հակոբյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է նվազեցնել հանրային ծառայության բնագավառում խորհրդականի պաշտոն զբաղեցնելու տարիքային ցենզը՝ այն 30 տարեկանից դարձնելով 25 տարեկան՝ ելնելով այդ հայեցողական պաշտոնն առավել լայն շրջանակի արհեստավարժ անձանց համար հասանելի դարձնելու և նրանց ներուժը պետական կառավարման տարբեր ոլորտներում արդյունավետորեն օգտագործելու անհրաժեշտությունից:

Նախագծով առաջարկվող կարգավորումն ընդհանուր առմամբ ընդունելի է:

Հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթով ևս նախատեսվել է նույնաբովանդակ կարգավորում: Ավելին, նշված նախագծով հանրային ծառայության ոլորտում խորհրդականի հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց տարիքային ցենզի նվազեցումից բացի հանվել է նաև հանրային ծառայության կամ աշխատանքային ստաժ ունենալու պահանջը:

Միաժամանակ ՀՀ կառավարությունը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և կից օրենքների նախագծերի փաթեթ (Կ-292-23.09.2019-ՊԻ-011/0):

Ելնելով վերը նշվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկում է նախագծով ներկայացված առաջարկությանն անդրադառնալ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և կից օրենքների նախագծերի փաթեթի (Կ-292-23.09.2019-ՊԻ-011/0) շրջանակներում:

Այնուամենայնիվ, կարգավորումը դրական է և քննարկվելու դեպքում խնդրում ենք հանել նաև հանրային ծառայության կամ աշխատանքային ստաժ ունենալու պահանջը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասում «30» թիվը փոխարինել «25» թվով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը. ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է հանրային ծառայության բնագավառում խորհրդականի պաշտոն զբաղեցնելու տարիքային ցենզի նվազեցման միջոցով այս հայեցողական պաշտոնն առավել լայն շրջանակի արհեստավարժ անձանց համար հասանելի դարձնելու և նրանց ներուժը պետական կառավարման տարբեր ոլորտներում արդյունավետորեն օգտագործելու անհրաժեշտությունից: 2. Առկա իրավիճակը և խնդիրները. 2018 թվականի մարտի 23-ին ընդունված և 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը (մասնավորապես՝ 8-րդ հոդվածի 3-րդ մասը) սահմանում է հանրային ծառայության ոլորտում խորհրդականների հետևյալ պաշտոնները. 1) Հանրապետության Նախագահի խորհրդական,

2) Ազգային ժողովի նախագահի խորհրդական,

3) Ազգային ժողովի նախագահի տեղակալի խորհրդական,

4) վարչապետի գլխավոր խորհրդական,

5) վարչապետի խորհրդական,

6) փոխվարչապետի խորհրդական,

7) Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական,

8) նախարարի խորհրդական,

9) Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի խորհրդական,

10) վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի խորհրդական,

11) անկախ պետական մարմնի նախագահի խորհրդական,

12) ինքնավար պետական մարմնի նախագահի խորհրդական,

13) Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,

14) գլխավոր դատախազի խորհրդական,

15) Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական

16) մարզպետի խորհրդական,

17) համայնքի ղեկավարի խորհրդական:

Նշված պաշտոնները համարվում են հայեցողական պաշտոններ, ընդ որում՝ 1- 16-րդ կետերում նշվածները՝ պետական, իսկ 17-րդ կետում նշվածը՝ համայնքային հայեցողական պաշտոններ: Օրենքի նշված հոդվածը սահմանում է նաև խորհդականի պաշտոն զբաղեցնելու ցենզերը (չափանիշները). դրանք են՝ 1) բարձրագույն կրթություն ունենալը,

2) հանրային ծառայության առնվազն երեք տարվա կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ ունենալը,

3) 30 տարին լրացած լինելը:

Մինչդեռ վերոգրյալ տարիքային ցենզը խնդրահարույց է և չի համապատասխանում հանրային ծառայության արդյունավետ իրականացման պահանջներին:

Ինչպես հայտնի է, ներկայումս Հանրապետությունում ստեղծված իրավիճակի պայմաններում առկա է արհեստավարժ ու եռանդուն երիտասարդ մասնագետների ներուժը հանրային իշխանության իրականացման ապահովման գործի մեջ ներդնելու մեծ անհրաժեշտություն: Մինչդեռ խորհրդականի պաշտոն զբաղեցնելու համար օրենքով սահմանված՝ 30 տարին լրացած լինելու պահանջը չափազանց բարձր տարիքային շեմ է նմանատիպ պաշտոնների համար: Հանրային ծառայության բնագավառում հաճախ են հանդիպում այն դեպքերը, երբ հանրային ծառայության անցնելու ցանկություն ունեցող արհեստավարժ անձինք, ովքեր օժտված են խորհրդականի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ բոլոր մասնագիտական գիտելիքներով ու կոմպետենցիաներով, 30 տարեկանը լրացած չլինելու պատճառով չեն կարողանում զբաղեցնել այդ պաշտոնը: Արդյունքում նման մասնագետներն առհասարակ չեն անցնում հանրային ծառայության, քանի որ հենց խորհրդականի պաշտոնն է, որ հնարավորություն է տալիս վերջիններիս օգտվելու քիչ թե շատ կայուն սոցիալական երաշխիքներից: Խորհրդականի պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներով ու կոմպետենցիաներով օժտված անձինք օբյեկտիվորեն չեն ցանկանում ընդունել այլ պաշտոն (օրինակ՝ օգնական) զբաղեցնելու առաջարկներն ու հեռանում են հանրային ծառայությունից: Ստեղծված իրավիճակում մեծապես տուժում է հենց հանրային իշխանության տվյալ մարմինը և հանրային ծառայությունն՝ ընդհանրապես: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով խորհրդականի պաշտոն զբաղեցնելու համար սահմանված տարիքային սահմանափակման թերությունն էլ ավելի ցայտուն է դառնում, երբ խորհրդականի՝ ներկայումս գործող տարիքային ցենզը համեմատում ենք Ազգային ժողովի պատգամավորի կամ նախարարի պաշտոն զբաղեցնելու համար Սահմանադրությամբ նախատեսված նվազագույն տարիքի հետ (25 տարեկան) 1 :

Այսպիսով, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով խորհրդականի պաշտոն զբաղեցնելու համար սահմանված տարիքային ցենզը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության բնագավառում ներկայումս առկա պահանջներին ու կարիքներին՝ խոչընդոտելով արհեստավարժ երիտասարդների ներգրավմանը հանրային իշխանության իրականացման ապահովման գործին:

3. Կարգավորման նպատակը և բնույթը.

««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը նպատակ ունի խորհրդականի պաշտոն զբաղեցնելու համար սահմանված տարիքային ցենզի նվազեցման շնորհիվ ապահովել

խորհրդականի պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներով ու կոմպետենցիաներով օժտված 25 տարին լրացած երիտասարդների կողմից այդ հայեցողական պաշտոնը զբաղեցնելու իրավական հնարավորություն:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է հանրային ծառայության արդյունավետության բարձրացում, մասնավորապես՝ 25 տարին լրացած անձանց համար «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված խորհրդականի պաշտոն զբաղեցնելու իրավական հնարավորության ստեղծման միջոցով այդ հայեցողական պաշտոնում մասնագիտական բարձր ունակություններով և կոմպետենցիաներով օժտված անձանց ներգրավում և նրանց ներուժի օգտագործում հանրային իշխանության իրականացման ապահովման բնագավառում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2019 թվականի N 1453 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-279-12.09.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 10
Երևան